

Ս.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Դիւանի գրութիւն Բագուի Հայոց գործակալ Տ. Ղևոնդ աւագ քահանայ Աստուածատրեանի անունով, որով ուղարկելով Ամերիկայի Բոստոն քաղաքից Ղազար Յարութիւնեանի փոխադրած մի հարիւր քսան և ինն (129) ռ. պատուիրուեց յանձնել Ղազար Եղիազարեանին (Баку, Красноводская ул. № 37, д. Джафарова) *և վերջնիս ստորագրութիւնը ներկայացնել Դիւանիս։ 1 յունիսի, թ. 1167։*

Դիւանի գրութիւն Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունու անունով, որով նկարագրելով Կովկասի սահմանները ապաստանած Տաճկահայ գաղթականների արդահատելի վիճակը՝ յանձնարարուեց յորդոր կարդալ Ամերիկայում բնակուող հայ ժողովրդին, որ շարունակեն օգնութիւն հասցնել թշուառ գաղթականներին, որպէս զի զոհ չգնան քաղցի և կենսական կարիքների։ 1 յունիսի, թ. 1170։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի Լուսաբարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին, համաձայն Նորին Սրբութեան հրամանի, տալ Ապարանի Նորաշէն գիւղի եկեղեցուն մի ձեռք հնոտի եկեղեցական զգեստ, 1 յունիսի, թ. 1178։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Ղզլարցի տիրացու Յովհաննէս Դոռդանեանի փոխադրուած յիսուն (50) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 2 յունիսի, թ. 1181։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Օդեսայից պ. Կալլիոտիի միջոցով Բուխարեստից Սարգիս Ազնաւուրեանի փոխադրած երկու հարիւր եօթանասուն վեց ռուբ. 20 կոպ. (276 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 2 յունիսի, թ. 1182։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Փարիզից Պօղոս Փաշա Նուպարի փոխադրած քսան և երեք հազար վեց հարիւր վաթսուն երեք (23,663) ռ. և Լոնդոնի Հայկական Միութեան Նախագահ գնդապետ Գրիգորի փոխադրած եօթ հազար եօթ հարիւր յիսուն (7750) ռուբլին, ընդամենայն երեսուն և մի հազար չորս հարիւր տասն և երեք (31,413) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելեաց։ 2 յունիսի, թ. 1183։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Սթոնհեմ քաղաքի Հայ-գրադարանական Միութեան վարչութեան փոխադրած մի հարիւր չորս ռուբլի 60 կոպ. (104 ռ. 60 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 յունիսի, թ. 1184։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ֆրեզնօ քաղաքի Հայկական Նպաստա-

հաւաք Յանձնախմբի փոխադրած վեց հազար մի հարիւր իններեւն և մի (6191) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 յունիսի, թ. 1185։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պարսկաստանի Դիլեանի Ռուսական Հիւպատոսի փոխադրած երեք հարիւր երեսուն չորս ռուբ. 15 կոպ. (334 ռ. 15 կ.), ժողովուած Ռաշտ քաղաքում, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 յունիսի, թ. 1186։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Փարիզից Պօղոս Փաշա Նուպարի փոխադրած ~~տասն և հինգ հազար~~ (15,000) ~~ռուբլին~~, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 յունիսի, թ. 1187։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Հայոց Առաջնորդի փոխադրած (ստացած զանազան ընկերութիւններից և անհատներից) երեք հազար հինգ հարիւր եօթանասուն ութ (3578) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 յունիսի, թ. 1188։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց թեմական Առաջնորդի անունով, որով վերադարձնելով Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեանի և Գիւտ աւագ քահանայ Ադամեանի կազմած «Կրօնի դասեր, տարրական դասընթացի, երկրորդ տարի» դասագիրքը, յանձնարարուեց յանձնել նոցա և յայտնել, որ Նորին Սրբութեան հրամանով չէ թոյլատրուում տպագրել ու հրատարակել այն։ 3 յունիսի, թ. 1191։

Նորին Սրբութեան մակագրութիւն Վրաստանի Հայոց թեմական Առաջնորդի մայիսի 23-ի թ. 469 յայտարարու-

թեան վրայ. «Ի նկատի ունենալով որ Մեր երջանկայիշատակ նախորդներին՝ Տ. Մկրտիչ Ա.-ի և Տ. Մատթէոս Բ.-ի կոնդակներով Տաճկահայ գաղթականներին պատկող քահանաները պարտաւոր են ստանալ տեղական (փեռայի և հարթի ծննդավայրի) քահանաներից պատշաճ վկայական նոցա ամուսնութեան մասին, իսկ այդպիսի վկայական ստանալն անհնար լինելու դէպքում պարտաւոր են արժանահաւատ անձերից, վերջիններիս պարտաւորական ստորագրութեամբ ստացած վկայականներով և ստոյգ աղբիւրներից տեղեկութիւններ ժողովելուց յետոյ միայն պատկել իրենց դիմող օտարահպատակներին, այն ինչ Բարձէն քահ. Տէր Խաչատրեանը (Տփխիսի) չէ կատարել այդ պայմաններից և ոչ մէկը, ուստի պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինօդին ենթարկել նորան օրինաւոր պատասխանատուութեան և հետևանքի մասին զեկուցանել Մեզ։ 3 յունիսի, թ. 1195։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ռումինիայի Իբլիզին քաղաքից Ստեփան Խաղնիզաթեանի փոխադրած երեք հարիւր ութսուն (380) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ կամաւորների և ապահովագիրն ուղարկել լսա պատկանելոյն։ 3 յունիսի, թ. 1196։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ռումինիայի Եաշ քաղաքից Մանուկ Սարգսեանի և Տիգրան Աւետեանի փոխադրած հինգ հարիւր (500) ռ. պատուիրելով մուծել մատեան կէսը յօգուտ գաղթականների, իսկ կէսը յօգուտ հայ կամաւորների և ապահովագիրն ուղարկել նուիրատուներին։ 3 յունիսի, թ. 1197։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Եւպատորիայի Կարապետ քահանայ Թումանեանի միջոցով Ալմաստ Փիլիկեանի փոխադրած՝ մարդու մահուան հոգեհացի փոխարէն—հինգ (5) ռուբլի, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և ապահովագիրն ուղարկել նուիրատուին։ 4 յուլիսի, թ. 1198։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցով Սինոդի ծառայողներից ստացուած յօգուտ գաղթականների եօթն ռուբլի 86 կ. (7 ռ. 86 կ.), 6 յունիսի, թ. 1203։

Կոնդակ Սինոդի անունով, որով առաջադրուեց կարգադրութիւն անել Նորընծայ Գիւտ աբեղայ Տէր Ղազարեանի և Արշակ աբեղայ Դաւթեանի ռոճիկների մասին և հաստատելով վերադարձնել նոցա իրենց ձեռնադրութեան վկայագրերը։ 6 յունիսի, թ. 1204։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Աղէքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան քարտուղարին մի հարիւր (100) ռուբլի և դրագրերին յիսունական (50-ական) ռուբլի։ 6 յունիսի, թ. 1206։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին փոխադրել Նորին Վեհափառութեան տրամադրութեան տակ գտնուած ընդհանուր կամաւորների գումարից Տփխիսի Կենտրոնական Ազգային Բիւրոյի անունով տասն հազար (10,000) ռուբլի՝ կամաւորների անհրաժեշտ ծախքերի համար։ 6 յունիսի, թ. 1207։

Դիւանի գրութիւն Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան հրամանի, տալ Ղարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետին խնդրած արձակուրդը և վիճակային արդիւնքից իրրև միանուագ նպաստ մի հարիւր (100) ռ.։ 6 յունիսի թ. 1208։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց՝ Նորին Վեհափառութեան հրամանի համաձայն փոխադրել Վանայ Լիմ անապատի վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանին երկու հարիւր վեթսուն չորս (264) ռուբլի, որ ծախսել է վանքերի նորոգութեան վրայ։ 6 յունիսի, թ. 1212։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին տալ Տ. Բագրատ եպիսկոպոսին ժամանակաւոր գործածութեան համար մի ձեռք եպիսկոպոսական զգեստ։ 7 յունիսի, թ. 1223։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Պորտլանդ քաղաքի «Հայ Տիկնանց Հայրենասիրաց Վարչութեան» փոխադրած չորս հարիւր վաթսուն երկու ռուբ. 28 կոպ. (462 ռ. 28 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Վարչութեան։ 7 յունիսի, թ. 1225։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Կազարմայի (Ատրախանի թեմ) Նորընծայ Գալուստ քահանայ Առաքելեանի փոխադրած երեք ռուբ. 20 կոպ. (3 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Նուիրատուին։ 7 յունիսի, թ. 1226։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Բեսսարաբիայի Կոնսիստորիայի ատենադպրին մի հարիւր (100) ռուբլի, երկու գրագրերին՝ յիսունական (50-ական) ռուբլի և ծառային վաթսուն (60) ռուբլի։ 8 յունիսի, թ. 1230։

Նորին Սրբութեան մակագրութիւն Սինոդի 1916 թ. մայիսի 27-ի թ. 734 յայտարարութեան վրայ. «Քահանաների տեղափոխութիւնը Հայոց եկեղեցու ոգով, ոկըզբունքով ցանկալի չէ, սակայն եթէ կան յարգելի պատճառներ և պարագաներ, որ տեղափոխութիւնն անհրաժեշտ են դարձնում, պատուիրում ենք Սինոդին այդպիսի դէպքերում տեղափոխել տալ թեմական իշխանութեանց համաձայնութեամբ, հեռացողի և ընդունողի Առաջնորդների նախօրօք բանակցութեամբ, ինչպէս և երկու ծխականների համաձայնութեամբ, մէկն արձակելով քահանա-

յին իւր հովուութիւնից և միւսն ընդունելով նորան իբրև նոր և մշտական հովիւ։ 8 յունիսի, թ. 1238։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած վաճառած ալիւրի արժէքը՝ երեսուն ութ հազար եօթ հարիւր երեսուն երեք ռուբ. 40 կոպ. (38,733 ռ. 40 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 9 յունիսի, թ. 1239։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած Պետական նպաստը յօգուտ գաղթականների՝ քառասուն վեց հազար ութ հարիւր տասն և երկու (46812) ռուբլին։ 9 յունիսի, թ. 1240։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով Պետական նպաստի գումարից, գաղթականներին բաժանելու համար, քառասուն և վեց հազար ութ հարիւր տասն և երկու (46812) ռուբ.։ 9 յունիսի, թ. 1241։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով գաղթականներին բաժանելու համար ալիւրի վաճառումից գոյացած գումարից, երեսուն ութ հազար եօթ հարիւր երեսուն երեք ռուբ. 40 կ. (38733 ռ. 40 կ.)։ 9 յունիսի, թ. 1242։

Դիւանի գրութիւն Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ղափանի ճիւղի անունով, որով բացատրուեց, որ Դպրոցական դրամագլուխն ունի իւր որոշ նպատակը՝ այն է օգնել Հայոց եկեղեցական-ծխական դպրոցներին, այնպէս որ այդ դրամագլխի տոկոսներից ուսուցիչներին նպաստ չի տրուում։ 9 յունիսի, թ. 1243։

Դիւանի գրութիւն Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի անունով, որով ուղարկելով Էմմ անապա-

տի վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանի խնդրի պատճէնը, առաջարկուեց նորոգել տալ Վանայ Շրջանի մի քանի գիւղական եկեղեցիներ։ 10 յունիսի, թ. 1254։

Կոնդակ Սինոդի անունով, որով յայտնուեց, որ Սինոդի անդամ Տ. Գէորգ վարդապետը և Մայր Աթոռի միաբան Տ. Գիւտ աբեղան կարգուած են կարուածական յետգնման Յանձնաժողովի անդամներ, պատուիրելով Սինոդին կարգադրութիւն անել այդ մասին։ 13 յունիսի, թ. 1259։

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով հաստատուեցին անդամ Երևանի Հայոց Հոգևոր թեմական դպրանոցի Հոգաբարձութեան՝ պ. պ. Յովհաննէս Մելիքեան, Պօղոս Կանդուրալեան, Գեղէոն Ահարոնեան, Թադէոս Տոշեան, Գրիգոր Պետրոսեան և Միքայէլ Տէր-Պօղոսեան և անձնափոխանորդ՝ պ. պ. բժ. Խաչատուր Յարութիւնեան, բժ. Արմենակ Մելիքեան և Մարտիրոս Դատեան։ 13 յունիսի, թ. 1270։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Կլիվլենդի Հայ Տիկնանց Բարեսիրաց Ընկերութեան փոխադրած եօթ հարիւր յիսուն (750) ռ. պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 յունիսի, թ. 1271։

Կոնդակ Սինոդի անունով, որով յայտնելով, որ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը կարևոր գործով յունիսի 25-ին Տփխիս է մեկնելու՝ պատուիրուեց հրամանագրել Վրաստանի Հ. թեմի Առաջնորդին Ն. Վեհափառութեանն ընդունելու համար և ամսի 20-ին հեռագրական հաղորդակցութեամբ տեղեկութիւն տալ այդ մասին Տ. Փոխարքայի Դիւանատան. առաջադրուեց Նորին Վեհափառութեան բացակայութեան ժամանակ ի կատար ածել Սինոդի օրադրերը։ 15 յունիսի, թ. 1273։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ վիճակային արդիւքից միանուագ նպաստ

Տաթևի Հոգևոր Կառավարութեան քարտուղարին՝ երկու հարիւր (200) ռուբլի և գրագրին՝ մի հարիւր (100) ռ.։ 15 յունիսի, թ. 1280։

Դիւանի շրջաբերական գրութիւններ Երևանի փոխթեմակալի, Վրաստանի, Շամախու և Ատրպատականի թեմակալ Առաջնորդների և Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարչի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Վեհափառութեան հրամանի, մինչև առաջիկայ յուլիսի 10-ը, կազմել և ներկայացնել Նորին Սրբութեան, իրենց թեմերի ամենաչքաւոր հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ցուցակը, որպէս զի որոշուի, թէ Դպրոցական Դրամագլխի տոկոսներից իւրաքանչիւր դպրոցին ո՞րչափ նպաստ կարելի կլինի յատկացնել։ 15 յունիսի, թ. 1290—1293։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի վարչութեան անդամ Տ. Թադէոս վարդապետի անունով, որով յայտնուեց, որ, համաձայն իւր խնդրի, Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ, արձակուած է Տպարանական Վարչութեան անդամի պաշտօնից։ 16 յունիսի, թ. 1299։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Գիւտ աբեղայի անունով, որով յայտնուեց, որ, Նորին Սրբութեան կարգադրութեամբ, կարգուեց Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի պատասխանատու խմբագիր և Տպարանի Վարչութեան անդամ։ 16 յունիսի, թ. 1300։

Նորին Սրբութեան մակագրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Թադէոս վարդապետի խնդրի վրայ. «Համաձայն Տ. Թադէոս վարդապետի խնդրի՝ արձակելով նորան տպարանական վարչութեան անդամութիւնից, կարգեցինք նորա տեղը Տ. Գիւտ աբեղային, յանձնելով վերջինիս նաև «Արարատ» ամսագրի խմբագրութիւնը, ուստի և պատուիրում ենք Սինօդին կարգադրել տալ Տ. Գիւտ աբեղային յաւելեալ ռոճիկ, ըստ պաշտօնին։ 16 յունիսի, թ. 1301։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին շնորհել Ղարսի Համազասպ քահանայ Ղարագեօզեանին՝ շրջանի եկեղեցիների համար, Ս. Միւռոն։ 18 յունիսի թ. 1307։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից Ա. Ինճեանի փոխադրած իններեւն եօթ ռուբ. 95 կ. (97 ռ. 95 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և ապահովագիրն ուղարկել նուիրատուին։ 18 յունիսի, թ. 1309։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մոսկուայից Լ. Ա. Լիւքսի փոխադրած հինգ (5) ռ., պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 18 յունիսի, թ. 1310։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Սխալցխայի Հոգևոր Կառավարութեան փոխադրած տասն և ինն ռուբ. 66 կոպ. (19 ռ. 66 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 յունիսի, թ. 1311։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տատեանա Նիկոլաևնայի Ցանձնաժողովի փոխադրած քսան և հինգ հազար (25,000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 յունիսի, թ. 1312։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, տալ Վանայ Արալէզ գիւղի Մարտիրոս քահանայ Տէր Սարգսեանին եկեղեցական գրքեր։ 18 յունիսի թ. 1316։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, տալ Վա-

նայ Սրալէզ գիւղի Մարտիրոս քահանայ Տէր Մարգսեանին մի ձեռք հնոտի եկեղեցական զգեստ։ 18 յունիսի, թ. 1317։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Շուշու Խորէն քահանայ Իսկեանդարեանի փոխադրած՝ Համբարձումի Բաբամեանի նուիրաբերած, յիսուն (50) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 20 յունիսի, թ. 1323։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի ագարակի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած եօթ հարիւր քառասուն ռուբ. (740 ռ.), գոյացած անասունների վաճառումից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրը յանձնել ըստ պատկանելոյն։ 20 յունիսի, թ. 1324։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի ագարակի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած մի հարիւր երեսուն (130) ռուբլին՝ «Համբերդ» կոչուած արօտատեղու մի մասի վարձը (արօտատեղին տրուած է վարձով Եղբայրական Օգնութեան անասունների համար), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրը յանձնել ըստ պատկանելոյն։ 20 յունիսի, թ. 1325։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի ագարակի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած երկու հարիւր յիսուն և երկու ռուբ. 40 կ. (252 ռ. 40 կ.) վաճառած 631 հատ մորթինների գին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրը յանձնել ըստ պատկանելոյն։ 20 յունիսի, թ. 1326։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի ագարակի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած երկու հարիւր յիսուն ռուբ. 60 կոպ. (250 ռ. 60 կ.), պանրի վաճառումից գոյացած, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրը յանձնել ըստ պատկանելոյն։ 20 յունիսի, թ. 1327։

Դիւանի գրութիւն Ուզովկայի Կարապետ քահանայ Դաւթեանի անունով, որով յայտնուեց ի գիտութիւն, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հաստատել Նորան՝ Տ. Կարապետ քահանային և պ. պ. Աստուածատուր Փայլայեանին, Կարապետ Շատիկեանին, Մովսէս Շատոյեանին և Սեդրաք Տէր Կիրակոսեանին տեղական Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անդամներ, օրհնելով բոլորին՝ լինել պիտանի և գործունեայ անդամներ, յօգուտ հայ փախստականների օժանդակութեան գործին։ 20 յունիսի, թ. 1328։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եորքից Տիգրան Սուքիասեանի փոխադրած ութ հարիւր քսան ռուբ. 67 կոպ (820 ռ. 67 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 21 յունիսի, թ. 1335։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադից Տատեանա Նիկոլաևնայի Ցանձնաժողովի փոխադրած քսան և հինգ հազար (25000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և ապահովագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 21 յունիսի, թ. 1336։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ գաղթականական գումարից Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով վաթսուն հազար (60000) ռուբլու ընթացիկ ծախքերի համար։ 21 յունիսի, թ. 1341։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մ. Տաճարի Լուսաբարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին Ս. Միւռոն շնորհել Կոտէյից շրջանի գործակալ Զաքարիա քահանային՝ շրջանի հայ եկեղեցիների գործածութեան համար։ 22 յունիսի, թ. 1344։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Պրովինցիայի Համախոհական ընկերութեան փոխադրած չորս հարիւր քսան և մի ռուբ. 88 կ. (421 ռ. 88 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունիսի, թ. 1345։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Թամնվիլի հայ գաղութի փոխադրած երեք հարիւր երկու (302) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունիսի, թ. 1346։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բոստոնի «Հայրենիք» թերթի խմբագրութեան փոխադրած մի հարիւր ութսուն և հինգ ռուբլի 85 կոպ. (185 ռ. 85 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունիսի, թ. 1348։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պուքրէշի Հայ Տիկնանց Կարմիր Խաչի Մխիթեան փոխադրած վեց հարիւր չորս ռուբ. 30 կ. (604 ռ. 30 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունիսի, թ. 1349։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից Միհրան Սուազլիի փոխադրած չորս հազար մի հարիւր եօթանասուն (4170) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունիսի, թ. 1350։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Ախալցխայի Հոգևոր Կառավարութեան քարտուղարին երկու հարիւր (200) ռուբլի, գրագրին՝ մի հարիւր յիսուն (150) ռուբլի և ծառային՝ մի հարիւր (100) ռուբլի։ 23 յունիսի, թ. 1359։

Կոնդակ Սինոդի Նախանդամ Տ. Ցուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով տեղեկացնելով, որ Նորին Սրբութիւնը յունիսի 25-ին կարևոր գործերով մեկնում է Տփխիս՝ յանձնարարուեց Նորին Վեհափառութեան բացակայութեան ժամանակ հսկողութիւն ունենալ Մայր Աթոռի միաբանութեան և իւրաքանչիւր պաշտօնեայի գործունէութեան վրայ և կարևոր դէպքերում դիմել Նորին Վեհափառութեան։ 24 յունիսի, թ. 1370։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Ցուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկելով Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանեցու ինքնաձեռագիր տետրը, Նորին Վեհափառութեան հրամանի համաձայն, յանձնարարուեց Նորից կազմել տալ և պահել մատենադարանում։ 24 յունիսի, թ. 1372։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել Թեհրան Ա. Գարագաշեանին մի օրինակ ծխական կանոնադրութիւն։ 24 յունիսի, թ. 1385։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ղզլարի հայ հասարակութեան խնդրի վրայ. «Պատուիրում ենք Աստրախանի Առաջնորդին իբրև բացառութիւն թոյլատրել Ղզլարի համայնքին ծխական ժողով գումարել և ղրաղուել Ջահրնկալ Եղիա Լալազարեանի ընտրական գործով, ինկատի ունենալով նորա պատրաստութիւնը եկեղեցական գիտելիքների մէջ և իբրև բազմամեայ սպասաւորի եկեղեցու, ուղարկելով ծխականների խնդիրները»։ 24 յունիսի, թ. 1387։

Դիւանի գրութիւն Տ. Ռուբէն քահանայ Բէկգիւլեանի անունով, որով յայտնուեց, որ իւր ներկայացրած մագաղաթեայ մի աւետարանը յանձնուած է Մայր Աթոռի մատենադարանը՝ անկորուստ պահելու համար։ 1 յուլիսի, թ. 1401։

Կանդակ Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց ծայրագոյն վարդապետի աստիճան տալ Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանին։ 1 յուլիսի, թ. 1402։

Դիւանի գրութիւն պ. Գրիգոր Զալխուշեանի անունով, որով յայտնուեց, որ ստացուած են նորա ուղարկած հանգուցեալ դերասան Ադամեանի ձեռնափայտը և մի իւղանկար փոքրադիր պատկերը։ 7 յուլիսի, թ. 1422։

Դիւանի գրութիւն Լոռուայ գործակալի անունով, որով յայտնուեց Նորին Վեհափառութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ հայ քահանայական դասի ժողովրդեան հետ Սանահին և Փոլագիրան կայարաններում Նորին Վեհափառութեան դիմաւորելու համար։ 8 յուլիսի, թ. 1432։

Դիւանի շրջաբերական գրութիւններ Ռուսահայոց թեմական Առաջնորդների անունով, որով առաջադրուեց Վանի շրջանի գաղթական հայ քահանաներին վերադարձնել հայրենիք՝ հովուելու իրենց ծխերը։ 10 յուլիսի, թ. 1440—1443։

Դիւանի շրջաբերական գրութիւն Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդների անունով, որով առաջադրուեց կազմել և ներկայացնել բոլոր դպրոցների հաստատութիւնների պաշտօնեաների անուանացուցակը, որոնց զինուորական ծառայութիւնից ազատելու համար միջնորդութիւն է յարուցուած։ 10 յուլիսի, թ. 1444—1447։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Ուսումնարանական Յանձնաժողովի անունով, որով ուղարկելով Շամախու թե-

մակալ Առաջնորդի թ. 30 յայտարարութեան պատճէնը, յանձնարարուեց քննել Շամախու թեմական դպրոցի հարցը և իւր եզրակացութիւնը ներկայացնել Նորին Վեհափառութեան։ 15 յուլիսի, թ. 1470։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութեան բարեհաճ կարգադրութեամբ Յանձնաժողովի նախագահ Տ. Գարեգին վարդապետն արձակուած է նախագահութիւնից, որպիսի պաշտօնը յանձնուած է Տ. Գէորգ վարդապետ Զեօրեկչեանին։ 15 յուլիսի, թ. 1476։

Դիւանի գրութիւն Տ. Գարեգին վարդապետի անունով, որով յայտնուեց, որ նա ազատ է համարուում Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախագահութիւնից, մնալով որպէս անդամ Յանձնաժողովի։ 15 յուլիսի, թ. 1478։

Դիւանի գրութիւն Տ. Գէորգ վարդապետ Զեօրեկչեանի անունով, որով յայտնուեց, որ կարգուած է Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախագահ։ 15 յուլիսի, թ. 1479։

Դիւանի գրութիւն Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունու անունով, որով պատուէր տրուեց Հայոց եկեղեցու արարողութիւններն անաղարտ պահելու համար։ 21 յուլիսի, թ. 1501։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց թեմի Տ. Առաջնորդի անունով, որով յանձնարարուեց յայտնել Ռուբէն Սանթուրճեանին, որ կուսակրօն հոգևորականութեան շարքն ընդունելու համար նորա տուած խնդիրը մերժուած է։ 21 յուլիսի, թ. 1534։

Դիւանի գրութիւն Պարսկա-Հնդկաստանի Հայոց Առաջնորդական Խորհրդարանի անունով, որով յայտնուեց, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց թոյլատրել աւելացնելու Խորհրդարանի անդամների թիւը։ 23 յուլիսի, թ. 1567։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի Տ. Լուսարարապետին մի ձեռք զգեստ և մի սկիհ ուղարկել Մշու Տ. Եղիշէ քահանային։ 23 յուլիսի, թ. 1569։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան մի օրինակ ճաշոց ուղարկել Մշու Տ. Եղիշէ քահանային։ 23 յուլիսի, թ. 1570։

Կոնդակ օրհնութեան բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանի անունով՝ նորա հասարակական ազգօգուտ գործունէութեան առթիւ։ 25 յուլիսի, թ. 1586։

Դիւանի գրութիւն Ղարաբաղի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Վահան Ծ. վարդապետի անունով, որով վերադարձուեց ի գործադրութիւն Նորին Վեհափառութեան հաստատած Շուշու «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի 1916/17 ուսումնական տարուայ նախահաշիւը։ 25 յուլիսի, թ. 1590։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան անունով, որով յանձնարարուեց տալ Ապարանի Ղազնաֆար գիւղի նոր կառուցած եկեղեցուն եկեղեցական գրքեր։ 1 օգոստոսի, թ. 1626։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետին տալ Ապարանի Ղազնաֆար գիւղի նոր կառուցուած եկեղեցուն Ս. Միւռոն և մի ձեռք հին քահանայական զգեստ։ 1 օգոստոսի, թ. 1627։

Նորին Սրբութեան մակագրութիւն Վանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան անդամուհիների գրութեան վրայ. «Ուղարկելով պատերազմական փոխառութեան 5½%-աբեր № 225154 Серія I տոմսը, մի հազար ռուբլու, պատուիրում ենք Սինոդին պահպանել այն մինչև Ընկերութեան պահանջը»։ 2 օգոստոսի, թ. 1634։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անունով, որով յանձնարարուեց յայտնել Նատալիա Արզութինակուն, որ Նորին Վեհափառութիւնը յարգելով նորա խնդիրը՝ բարեհաճեց արտօնել նորան երկաթեայ ցան-

կապատ շինել իրենց ննջեցեալների գերեզմանների շուրջը։ 5 օգոստոսի, թ. 1647։

Դիւանի գրութիւն Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդի անունով, որով նկարագրելով Վրաստանի Հայոց թեմի Սուրամ քաղաքի վրացախօս հայերի նիւթական անձուկ վիճակը և ուսումից զուրկ լինելը, խնդրուեց որոշ նպաստ յիշեալ վայրի ծխական դպրոցին։ 5 օգոստոսի, թ. 1661։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան գեներալ-մայոր Ստեփան-բէկ Սիլիկեանի անունով՝ Վարդաշէն գիւղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի շէնքն իւր ծախքով կառուցանելու առթիւ։ 5 օգոստոսի, թ. 1663։

Նորին Սրբութեան մակագրութիւն Գանձակի փոխանորդի անցած յուլիսի 28-ի № 328 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք Սինոդին ժողովրդի դիւրութեան տեսակէտն ի նկատի ունենալով, ինչպէս և Գանձակի փոխանորդութեան արդի վիճակը, միացնել Իգիրմիգորդի գործակալութիւնը ժամանակաւորապէս Գանձակի յաջորդութեան, իբրև փորձ»։ 6 օգոստոսի, թ. 1675։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով, պետական նպաստի գումարից, ութսուն և ութ հազար չորս հարիւր եօթանասուն և մի բուբլու (88,471 ռ.)։ 6 օգոստոսի, թ. 1678։

Դիւանի գրութիւն Դերբենդի հայոց գործակալի անունով, որով յանձնարարուեց յայտնել Ռուբէն Տէր-Գրիգորեանին, որ եկեղեցու պաշտօնեան առանց ժողովրդի ընտրութեան չի կարող ատոիճան ստանալ։ 6 օգոստոսի, թ. 1688։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ռանգուն քաղաքում ապրող Տիկնանց՝ Թարբոսնի և Մրկ-Ալտոյի անունով՝ Տաճկահայ գաղթականութեան ցոյց տուած աջակցութեան առթիւ 6 օգոստոսի, թ. 1689։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի թանգարանի վարչութեան հանգուցեալ դերասան Պետրոս Ադամեանի նկարը և ձեռնափայտը, ստացուած եղբ. Գրիգոր և Փ. Զալխուշեաններից։ 6 օգոստոսի, թ. 1690։

Դիւանի գրութիւն յանուն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի Տ. Նախագահի, որով յայտնուեց ի գիտութիւն, որ Նորին Սրբութեան բարեհաճ կարգադրութեամբ, Մայր Աթոռի միաբան Տ. Գիւտ աբեղան կարգուած է Յանձնաժողովի անդամ։ 8 օգոստոսի, թ. 1692։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Գիւտ աբեղայի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութեան կարգադրութեամբ կարգուած է նա Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անդամ։ 8 օգոստոսի, թ. 1693։

Դիւանի գրութիւն Հոնկ-Կոնգում բնակող տիկին Մարիամ Վրթանէսեանի անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ հայ գաղթականներին աջակցութիւն ցոյց տալու համար։ 9 օգոստոսի, թ. 1698։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ճապոնիայի Եօկօհամա քաղաքում ապրող տիկին Դիանա Սրգսարեանի անունով հայ փախստականներին օգնութիւն ցոյց տալու առթիւ։ 9 օգոստոսի թ. 1699։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Պորտ-Սայիդում ապրող տիկին Ֆիլիպի անունով հայ փախստականներին օգնութիւն ցոյց տալու առթիւ։ 9 օգոստոսի, թ. 1700։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին տալ Դպրոցական գրամագլխի տոկոսներից, Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով, միանուագ նպաստ Գօշավանքի դպրոցի շէնքն աւարտելու և դասաւանդութիւնն սկսելու համար՝ երկու հարիւր (200) ռուբլի։ 10 օգոստոսի, թ. 1707։

Նորին Սրբութեան մակագրութիւն այրի Աննա Մանդինեանի խնդրի վրայ. «Ի նկատի ունենալով այրի Աննա Մանդինեանի անել դրութիւնը, ի նկատի ունենալով, որ Մ. Աթոռի ճեմարանի վարչութեան կողմից Սինոդի գանձարանից շարունակւում է տրուել այրուն թոշակ, և որ Ներսիսեան Դպրանոցն առաւել ապահով է և կարող է հոգալ իւր ծառայողների կացութիւնը, ուստի և պատուիրում ենք Ներսիսեան Դպրանոցի Հոգաբարձութեան տալ հանգուցեալ Մանդինեանի այրուն որոշ թոշակ մինչև նրա մահը։ 10 օգոստոսի, թ. 1708։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վարկ բանալ գաղթականական գումարից Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, ընթացիկ ծախքերի համար, երեսուն հազար (30,000) ռուբլու։ 12 օգոստոսի, թ. 1716։

Նորին Սրբութեամբ պատուիրուեց Երևանի փոխ-թեմակալին տալ վիճակային արդիւնքից Հին-Նախիջևանի փոխանորդ Տ. Սիօն վարդապետին միանուագ նպաստ՝ երկու հարիւր (200) ռուբլի։ 12 օգոստոսի, թ. 1721։

Դիւանի գրութիւն պ. Երուանդ Լալայեանի անունով, որով, Նորին Սրբութեան հաճութեամբ, արտօնուեց նորան նկարագրել, նկարել Հայոց բոլոր վանքերը, եկեղեցիները և նոցա մէջ եղած պատմական նշանակութիւն ունեցող հնութիւնները։ 12 օգոստոսի, թ. 1728։

Դիւանի գրութիւն Ղ.արսի Հայոց Հոգևոր Կառավարութեան անունով, որով յանձնարարուեց յայտնել «Բոս» կոչուած քաղաքամասի հայ ծխականներին, որ Գրիգոր քահանայ Նժդեհեանը չէ կարող կարգուել նոցա վերայ ծխական քահանայ, քանի որ պահանջուած կրթական ցենզ չունի նա։ 12 օգոստոսի, թ. 1731։

Գրութիւն Դիւանի Բեսարաբիայի Հայոց թեմակալ Առաջնորդի անունով, որով, յայտնուեց, որ եթէ Իւզովկայում ծխական դպրոց բանալու կարիք և միջոց կայ՝

նորին Վեհափառութեան կողմից արգելք չկայ բանալուն։ 12 օգոստոսի, թ. 1732։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Հ. Նախիջևանի շրջանի Փառակա գիւղացի Ղևոնդ Յակոբեանի անունով՝ Փառակա գիւղում իւր ծախքով դպրոցական շէնք կառուցանելու և դպրոցին նպաստ տալու առթիւ։ 13 օգոստոսի, թ. 1737։

Դիւանի գրութիւն Երևանի Հայոց փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց գործի հրաւիրել Մեծ Ղարաքիլիսա գիւղի նորընտիր ծխական Հոգաբարձութեան։ 17 օգոստոսի, թ. 1760։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան նորին Վեհափառութեան ընդունող Տփխիսի կարգադիր Յանձնաժողովի նախագահ պ. Տիգրան Նազարեանի և անդամներ՝ Տ. Գիւտ ուսագ քահ. Ադամեանի, և պ. պ. Միքայէլ Ա-թարէգեանի, Դաւիթ Խան Ա.ան-Իւզբաշեանի, Միքայէլ Արամեանի, Յովսէփ Արազեանի, Յակոբ Ադարարեանի, Համբարձում Առաքելեանի, Բարսեղ Առաքելեանի, Խաչատուր Աֆրիկեանի, Արամ Բաղդասարեանի, Յ. Բարսեղեանի, Տեփոյեանի, տիկին Նունէ Դոլուխանեանի, Ա.ետիք Եզեկեանի, Լևոն Եւանգուլեանի, Սարգիս Եսայեանի, Երուանդ Լալայեանի, Յ. Խալաթեանի, Մնացական Խուանունցի, Գաբրիէլ Ծուրինեանի, Սարգիս Կաֆեանի, տիկին Հայկանոյշ Մարտիրոսեանի, Սարգիս Մազմանեանի, Մնացական Մարտիրոսեանի, Ադէքսանդր Մելիք-Ազարեանի, Յակոբ Մելիք-Բախտամեանի, Սարգիս Մուրադբէգեանի, տիկին Մարիամ Յարութիւնեանի, Սամսոն Յարութիւնեանի, տիկին Երանուհի Յարութիւնեանի, Իսահակ Յարութիւնեանի, բժշկապետ Բագրատ Նաւասարդեանի, Յակոբ Շահնազարեանի, Ադէքսանդր Պողոսեանի, Ս. Ստեփանեանի, Ա. Սաֆարեանի, Յ. Սէյլանեանի, Գարեգին Տէր-Ստեփանեանի, Լևոն Տէր-Յովհաննիսեանի, Սարգիս Տէր-Յովհաննիսեանի, Յարութիւն Փիրալեանի և Անտոն Փալանթարեանի անունով՝ Վեհափառ Հայրապետին պատշաճա-

ւոր ընդունելութիւն և հիւրասիրութիւն ցոյց տալու առթիւ։ 19 օգոստոսի, թ. 1766։

Կոնդակ Սինոդի անունով, որով ուղարկելով Կովկասի Տ. Փոխարքայի գրութեան պատճէնը, որով յայտնւում է, որ ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ հրամայուած է Վրաստանի թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեանին լինել Առաջնորդ Ատրպատականի թեմի, իսկ Ատրպատականի թեմակալ Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին՝ լինել Առաջնորդ Վրաստանի Հ. թեմի, պատուիրուեց տնօրինել արժանը։ 19 օգոստոսի, թ. 1776։

Նորին Սրբութեան մակագրութիւն Շուշեցի Հայկ Եպրամիշեանի խնդրի վրայ. «Պատուիրում ենք Սինոդին ընդունել Շուշեցի Հայկ թէոդորոսեան Եպրամիշեանին հոգևոր կոչման մէջ, եթէ օրինական արգելք չկայ առ այդ, որպէսզի Մայր Աթոռի միաբանների շարքը դասենք նրան»։ 22 օգոստոսի, թ. 1783։

Կոնդակ Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով, համաձայն Նորին Սրբութեան հրամանի, առաջարկուեց միջնորդութիւն յարուցանել, որ իւր թեմի Հայոց դպրոցների ուսուցիչներին ևս ազատ համարեն զինուորագրութիւնից։ 25 օգոստոսի, թ. 1805։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի տպարանի Վարչութեան անունով, որով յանձնարարուեց տալ Պօղոս-քիլիսա գիւղի եկեղեցուն չորս կտոր եկեղեցական գրքեր։ 26 օգոստոսի, թ. 1810։

Գրութիւն Դիւանի Ասարխանի Հայոց թեմի Առաջնորդի անունով, որով արտօնուեց Նորին Սրբութեան կողմից Աֆանասեակի Պոստիկ հայկական գիւղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բանալ։ 26 օգոստոսի, թ. 1814։

Կոնդակ Սինոդի անունով, որով տեղեկութիւն տալով Հայկ Եպրամիշեանին Մ. Աթոռի միաբանութեան շարքն ընդունելու և սարկաւագ ձեռնադրելու մասին, առաջադրուեց կարգադրութիւն անել նորա միաբանական ոճկի մասին։ 29 օգոստոսի, թ. 1825։

Կոնդակ Տ. Մատթէոս եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց սարկաւագ ձեռնադրել Շուշեցի Հայկ Եպրամիշեանին։ 29 օգոստոսի, թ. 1826։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մահակ Արքեպիսկոպոս Այվազեանի ներկայացրած վեց հազար (6000) ռուբլին, որ ստացել էր Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 31 օգոստոսի, թ. 1833։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Թադէոս վարդապետի անունով, որով նորա օգտակար ծառայութեան իբրև վարձատրութիւն Ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհուեց։ 12 յունիսի, թ. 1255։

Կոնդակ Նոր-Բայազիտի Փաշաբեանդ գիւղի Գեղամ քահանայ Տէր Սիմէօնեանի անունով, որով, համաձայն Երևանի Հայոց փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, ինկատի ունենալով, որ մեծ ջանք է թափել հայրենի գիւղում դպրոցական սեպհական շէնք կառուցանել տալու գործում։ 15 յունիսի, թ. 1295։

Կոնդակ Ցաթեի շրջանի գործակալ Ներսէս քահանայ